



ՀԱՊՀ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ  
ՄԻՋԱՐԳԱՅԻՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ  
«ԴԻՊԼՈՄԱ» ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ 2024



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Փիլիսոփայություն
2. Նպատակներ
3. Պարտականություններ
5. Աջակցություն
1. Միջավայր, մշակույթ
6. Գործընկերություններ և համայնքի ներգրավվածություն
7. Մասնագիտական զարգացում
8. Տեղեկատու գրականություն



## 1. Փիլիսոփայություն

**Դպրոցի առաքելությունը.** ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը կրթում և դաստիարակում է լայնախոհ հետազոտողների, ովքեր ձգտում են աշխարհն ավելի լավ դարձնել:

**Դպրոցի տեսլականը.** Հգորացնել սովորողների հմտությունները և գիտելիքները՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ գլոբալ աշխարհում առկա մարտահրավերները հաղթահարելու համար:

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցի (այսուհետև՝ Դպրոց) գործունեության նպատակն է ստեղծել բարենպաստ, խրախուսող ուսումնական միջավայր, որը ոգեշնչում է սովորողներին՝ աշխարհը դարձնելու անվտանգ ու ավելի լավ: Դպրոցի փիլիսոփայությունն է, հաշվի առնելով ինչպես տեղական պայմանները, այնպես էլ միջազգային բակալավրատի (ՄԲ) սկզբունքները, սովորողների մեջ խթանել համայնքին պատկանելության զգացումը, սերմանել արդարության գիտակցությունը, խրախուսել սովորողներին՝ բազմակողմանիորեն նայելու և գնահատելու աշխարհի բազմակերպությունը, ապահովել ներառական կրթության հնարավորությունը, աջակցել յուրաքանչյուր սովորողի առանձնաահատուկ կարիքներին, վերացնել կրթության խոչընդոտները:

## 2. Նպատակներ

Դպրոցի՝ մուտքի և ներառման քաղաքականությունը նպատակ ունի.

*1. Խթանել հավասար հնարավորությունները.* ստեղծել ուսումնական միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող հավասար հնարավորություն ունի օգտվելու և ներգրավվելու համադասարանական, արտադպրոցական և ակադեմիական ծրագրերի ամբողջ շրջանակում, որոնք առաջարկում է Դպրոցը: Ուսումնական ծրագիրը համատեղում է զգացմունքների և վարքագծի դաստիարակությունը՝ սովորողներին օժտելով այնպիսի հմտություններով, ինչպիսիք են բախումներ (կոնֆլիկտներ) լուծելու ունակությունը, լարվածության (սթրեսի) կառավարումը և հուզական վերահսկողությունը:

*2. Աջակցություն սովորողների տարբեր կարիքներին.* արձագանքել սովորողների տարբեր կարիքներին, ինչպիսիք են՝ ներառականության խնդիրները, ուսուցման տարբեր ոճերը կամ ֆինանսական դժվարությունները:

*3. Խթանել ներառական պրակտիկան.* Ծրագրի կանոնակարգերով խրախուսվում է ներառական մեթոդների կիրառումը դասավանդման, գնահատման և դասարանի կառավարման գործընթացներում:

*4. Հոգ տանել բարեկեցության և ներգրավվածության մասին.* Դպրոցի գործունեության առաջնահերթությունն է սովորողների ֆիզիկական, մտավոր և սոցիալական բարեկեցության ապահովումը: Նպատակն է ստեղծել բարենպաստ, անվտանգ և ներառական ուսումնական միջավայր, որը խրախուսում է դրական փոփոխարարելու-



թյունները, խթանում ուսանողների ներգրավվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներում և ամրապնդում ինչպես մտավոր, այնպես էլ ֆիզիկական առողջությունը:

*5. Սովորողների ձայնի իրավունքի և գործընթացներին մասնակցության ուժգնացում.* Սովորողները խրախուսվում են՝ ակտիվորեն մասնակցելու իրենց կրթությանը: Դպրոցը խթանում է աշակերտակենտրոն ուսումնական միջավայրը զարգացումը և գործունեությունը՝ հնարավորություն տալով սովորողներին՝ բարձրաձայնելու իրենց կարծիքները, գաղափարները և նպատակները:

*6. Գործընթացներին ծնողների և խնամակալների ներգրավում.* գիտակցելով ծնողների և խնամակալների կարևոր դերը երեխաների կրթությանն աջակցելու գործում, Դպրոցը նպատակ ունի գործընկերային արդյունավետ հարաբերություններ և կանոնավոր հաղորդակցություն հաստատել ծնողների հետ: Խթանելով համագործակցությունը և ներգրավելով նրանց կրթական գործընթացներում՝ ապահովել լավագույն արդյունքներ երեխաների համար:

*7. Համաձայնակցում ՄԲ-ի սկզբունքներին.* Դպրոցը երաշխավորում է, որ ինտեգրելով ՄԲ-ի առաքելությունը՝ մուտքի և ներառման քաղաքականությունը համահունչ է Միջազգային բակալավրատի IB ծրագրի սկզբունքներին՝ կրթելու բանիմաց, ուշիմ և հոգատար երիտասարդների, ովքեր աջակցում են՝ ստեղծելու ավելի լավ և ավելի խաղաղ կյանք՝ միջմշակութային փոխըմբռնման և համակեցության ճանապարհով:

*8. Ենթակառուցվածքներ.* ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը ձգտում է սովորողների համար ստեղծել ներառական միջավայր՝ ապահովելով անհրաժեշտ ենթակառուցվածքները:

### 3. Պարտականություններ

Հասանելիության և ներառման խթանումը պահանջում է ակտիվ մասնակցություն և համագործակցություն դպրոցական համայնքի շահագրգիռ տարբեր կողմերի միջև: ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցում սահմանվում են ուսուցիչների, սովորողների, դպրոցի և ծնողների հետևյալ հատուկ պարտականությունները՝ ներառական կրթական միջավայր ստեղծելու համար.

#### 1. Ուսուցիչները պարտավոր են.

*Իրականացնել ներառական ուսուցման պրակտիկա և ներառական ուսումնական ծրագիր:* Ուսուցիչները պատասխանատու են ուսուցման մեթոդների կիրառման համար, որոնք համապատասխանում են ուսուցման տարբեր ոճերին և փորձառությանը: Հարմարեցվում են ուսուցման ռազմավարությունները, տարբերակվում գնահատականները և ապահովվում անհրաժեշտ պայմաններ, որպեսզի բոլոր սովորողները կարողանան ակտիվորեն մասնակցել ուսումնական գործընթացներին և հասնեն հաջողության:



*Դասարանում խթանել աջակցող մթնոլորտ:* Ուսուցիչները դասարանում ստեղծում են անվտանգ և ներառական միջավայր, որտեղ բոլոր սովորողներն իրենց հարգված, գնահատված և աջակցված են զգում: Խրախուսվում են դրական փոխազդեցությունն ու համագործակցությունը, արձագանքվում է խտրականության կամ օտարման ցանկացած դեպք, մոդելավորում ներառական վարքագիծը:

*Ուսանողներին անհատական աջակցություն:* Ուսուցիչները բացահայտում են ուսանողների հատուկ կարիքները և ապահովում անհատական աջակցություն, ստեղծում ուսումնառության հարմարավետ միջավայր: Համագործակցելով համապատասխան օժանդակ անձնակազմի հետ, ինչպիսիք են հատուկ մանկավարժները կամ հոգեբանները, ձգտում են արդյունավետորեն լուծել ուսուցման բազմաբնույթ կարիքները:

**2. Սովորողները պարտավոր են.**

*Ընդունել ու հարգանք դրսևորել ներառական մշակույթի նկատմամբ:* Սովորողները պատասխանատու են իրենց հասակակիցներին հարգանքով, կարեկցանքով և բարությանը վերաբերվելու, բազմազանությունն ընդունելու և տարբեր տեսակետներն ու փորձառությունները գնահատելու համար: Նրանք պետք է ակտիվորեն նպաստեն ներառական դպրոցական մշակույթի ստեղծմանը՝ մերժելով խտրականությունը, անարեկումը և բացասական վարքագիծը:

*Պաշտպանել իրենց կարիքները:* Սովորողները պետք է իրենց հատուկ կարիքները հաղորդեն ուսուցիչներին կամ դպրոցի հոգեբանին և, անհրաժեշտության դեպքում, ստանան աջակցություն: Պետք է ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին, դասարանական քննարկումներին, կառուցողական կերպով արտահայտեն իրենց կարծիքներն ու մտահոգությունները:

**3. Դպրոցը պարտավոր է.**

Դպրոցը, արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունն ապահովելու և կրթության նպատակներն իրականացնելու համար, օգտագործում է ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները՝ ՄԲ ուսուցման մոտեցումներին համապատասխան, հաշվի առնելով ՄԲ ուսուցման պրոֆիլի բնութագրերը յուրաքանչյուր սովորողի, ներառյալ ուսման տարբեր կարիքներ ունեցողների դեպքերում.

- ✓ *Բովանդակային կառուցվածք՝ համապարփակ զարգացմանն աջակցելու համար:* Բոլոր առարկաների բովանդակությունը կազմակերպվում է այնպես, որ նպաստի սովորողների համակողմանի զարգացմանը: Այդ բովանդակությունը պետք է նպաստի յուրաքանչյուր սովորողի անձնական ունակությունների և նախասիրությունների զարգացմանը, նրանց տեսակետների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը և ապահովի, որ սովորողները ձեռք բերեն անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:
- ✓ *Անհատական ուսուցման գործիքների տրամադրում:* Դպրոցը փորձում է անհատականացված և մատչելի դարձնել տեխնիկական ռեսուրսների ու գործիքների օգտագործումը, որոնք ընդլայնում են յուրաքանչյուր աշակերտի ուսումնառության շրջանակն ու փորձը:



- ✓ *Մանկավարժական, սոցիալական և հավելյալ ծառայությունների առաջարկում:* Դպրոցն առաջարկում է մանկավարժական, սոցիալական և լրացուցիչ աջակցության ծառայությունների լայն տեսականի, որոնք նպաստում են սովորողների համակողմանի զարգացմանը: Այդ գործընթացները կարող են բարելավվել՝ ուսուցիչներին շարունակական վերապատրաստման հնարավորություն տալով, ներառյալ սեմինարները, դասընթացները և ներառական կրթության փորձագետների հետ համագործակցությունը:

**4. Ծնողները պարտավոր են.**

*Դպրոցի հետ հաղորդակցություն և համագործակցություն:* Կարևոր է ծնողների դերը իրենց երեխայի կրթության գործում: Նրանք համագործակցում են ուսուցիչների և Դպրոցի անձնակազմի հետ՝ բաց հաղորդակցության միջոցով տեղեկացված լինելու համար իրենց երեխայի առաջընթացի, մարտահրավերների և հաջողությունների մասին: Ծնողներն ակտիվորեն մասնակցում են ծնողական ժողովներին, դպրոցական միջոցառումներին և կրթական որոշումների կայացմանը:

*Աջակցություն երեխաներին տանը:* Ծնողները պետք է ամրապնդեն ներառական արժեքներն ու վարքագիծը տանը՝ խթանելով երեխաների կողմից դրանց հավանություն տալը, կարեկցանքի ու հարգանքի դրսևորումները: Նրանք կարող են աջակցել իրենց երեխաների ուսմանը՝ ապահովելով բարենպաստ միջավայր, խրախուսելով նրանց ինքնապաշտպանության հմտությունները և ակտիվորեն մասնակցելով իրենց երեխայի կրթությանը:

**4. Աջակցությունը ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցում**

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը պարտավորվում է բացահայտել և լուծել յուրաքանչյուր սովորողի յուրահատուկ կարիքները: Դպրոցը ձգտում է ապահովել ներառական ուսումնական միջավայր, որտեղ գնահատվում է բազմազանությունը, խթանվում յուրաքանչյուր սովորողի ներուժը: Իրականացվում և վերանայվում են համակարգերը և գործընթացները՝ հատուկ կրթական պայմաններ պահանջող սովորողների կարիքների գնահատման նպատակով: Այս քաղաքականությունը ներառում է յուրաքանչյուր սովորողի զարգացման հնարավորությունների ճանաչումը, կրթական ծրագրերում սովորողների մասնակցության ապահովումը և կրթական հատուկ անհրաժեշտ դրույթների որոշումը:

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց ընդունելության գործընթացի շրջանակներում հավաքվում են մի շարք փաստաթղթեր, որոնք պատկերացում են տալիս դիմորդի ֆիզիկական, ճանաչողական և հոգեբանական զարգացման մասին: Այդ փաստաթղթերը պարունակում են մասնագիտական գնահատականներ և հանդիսանում են դիմորդի ընդունելության քննությունների սահմանման, նրա կրթական կարիքների որոշման և արդյունավետ կրթական միջավայրի պլանավորման անբաժանելի մասը:

- Դպրոցում ստեղծել բժշկահոգեբանամանկավարժական փորձաքննության խումբ՝ բացահայտելու և գնահատելու սովորողների ֆիզիկական, մտավոր և հոգեբանական



առանձնահատկությունները՝ համապատասխանեցնելու համար կրթական մոտեցումները նրանց կարողություններին: Որակավորված աշխատակիցներից բաղկացած այս թիմի պարտականություններն են.

1. Ստեղծել հաշվետվություններ, որոնք ուրվագծում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներին հարմար կրթական միջավայրը:

2. Խորհրդատվության միջոցով առաջարկություններ և աջակցություն տրամադրել հաշմանդամություն ունեցող սովորողների ծնողներին կամ խնամակալներին:

3. Տրամադրել խորհրդատվություն դպրոցի անձնակազմին ակադեմիական, առողջապահական և սոցիալական ռեսուրսների վերաբերյալ՝ ինչպես բավարարել կարիքավոր սովորողների կրթական կարիքները և պաշտպանել նրանց իրավունքները:

4. Պատրաստել գաղտնի, դասդասված տեղեկատվություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների վերաբերյալ և դրանք հասանելի դարձնել դպրոցի պաշտոնյաներին՝ օրենքի պահանջներին համապատասխան:

• Արդեն ընդունված դիմորդների ծնողները կամ խնամակալները լրացնում են հարցաթերթիկ՝ ներկայացնելով իրենց երեխայի հոգեբանական և ֆիզիկական վիճակը: Անհրաժեշտության դեպքում ծնողների կամ խնամակալների հետ կատարվում են բանավոր լրացուցիչ հարցազրույցներ:

• Դպրոցի մասնագետների թիմի կողմից սովորողների վերաբերյալ իրականացված գնահատման արդյունքները և ծնողների կամ խնամակալների կողմից տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը լիովին ապահովվում է:

Սովորողների անհատական տարբերությունները դիտարկվում են ոչ որպես ուղղումներ պահանջող խնդիրներ, այլ որպես կրթության ժողովրդավարացման և հարստացման հնարավորություն: Սովորողների առանձնահատուկ տարբերությունների ուսումնասիրությունը կարող է ծառայել որպես կատալիզատոր նորարարական պրակտիկաների համար՝ ի նպաստ բոլոր սովորողների՝ անկախ անձնական հատկանիշներից կամ այլ գործոններից:

• Սովորողի կրթական հատուկ պայմանների կարիքները գնահատելու համար ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը.

1. կվերահսկի սովորողի ներգրավվածությունը կրթական ծրագրերում,
2. կբացահայտի սովորողի զարգացման հնարավորությունները,
3. կստեղծի կրթական անհրաժեշտ հատուկ պայմաններ,
4. ըստ անհրաժեշտության կհամագործակցի ներքին գնահատման մասնագետների և Երևանի թիվ 4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ:

Այդ կենտրոնը գնահատում է կրթական հատուկ պայմանների անհրաժեշտությունը և տրամադրում մանկավարժահոգեբանական ծառայություններ, որոնք օգնում են սովորողին՝ անցնելու կրթական ճանապարհը:



- Դպրոցը, անհրաժեշտության դեպքում, կազմակերպում է անհատական ուսուցում ընդունելության կամ նախնական ճանաչման փուլում: Կազմակերպվում են դասընթացներ, եթե սովորողի գիտելիքներն ու հմտությունները չեն համապատասխանում ծրագրի պահանջներին:
- Դպրոցը ճշգրտումներ է կատարում գնահատման գործընթացներում, որոնք կարող են ներառել.
  - ✓ Գնահատման աշխատանքի ներկայացման ձևի փոփոխությունները (բանավոր կամ գրավոր).
  - ✓ Գնահատման ընթացքում օգտագործված գործիքների փոփոխությունները.
  - ✓ Գնահատումների համար լրացուցիչ ժամանակի հատկացումը.
  - ✓ Գնահատման վայրի կամ սովորողի դիրքի (բանախոսի մոտ, լավ լուսավորված, ուշադրությունը նվազագույն չափով շեղող վայրերում և այլն) դիտարկումը:
- Ներառական կրթական միջավայր ստեղծելու համար ուսուցիչները կարող են կազմել սովորողների անհատական ուսումնական պլաններ: Այս ծրագիրը, հաշվի առնելով հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները և սովորողների առանձնահատուկ կարիքները, նախանշում է յուրաքանչյուր սովորողի կրթության տարեկան ուսուցման նպատակը՝ ներառյալ ձեռքբերումների համար անհրաժեշտ առաջադրանքները և գործողությունները:
- Տնային կրթության տրամադրում կրթական հատուկ պայմանների կարիք ունեցողներին: Եթե սովորողը առողջական պատճառներով չի կարող հաճախել դպրոց, ուսուցիչները կազմակերպում են առցանց դասընթացներ՝ ակադեմիական և մասնագիտական կրթություն իրականացնելու համար:

### 5. Միջավայր, մշակույթ

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը, համաձայն այս քաղաքականության, տրամադրում է համապատասխան անձնակազմ, հարմարություններ և ռեսուրսներ: Մանկավարժական և հոգեբանական աջակցության ծառայությունները հասանելի են սովորողներին, ուսուցիչներին և ծնողներին: Դպրոցի հոգեբանական ծառայությունը հաշվի է առնում ժամանակակից գիտական և սոցիալական մարտահրավերները:

Այս քաղաքականությունը ներառում է.

1. զգայնության և վարքագծային տարբերությունները,

2. մշակութային, սոցիալ-տնտեսական և լեզվական բազմազանությունը:

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցում գիտակցում են, որ ներառական կրթական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը վեր է դասարանային աջակցությունից: Մա ներառում է համադպրոցական միջավայրի ստեղծում, որը ֆիզիկապես հասանելի է նաև շարժունակության խնդիրներ ունեցող սովորողներին: Նախատեսվում է կառուցել շինություններն այնպես, որ հարմար լինի սայլակներից կամ այլ շարժական միջոցներից օգտվող անձանց տեղափոխելու համար:





Այդ հարմարությունները ներառում են նաև հատուկ նախագծված արահետներ, որոնք ապահովում են հեշտ մուտք դեպի դասասենյակներ, լաբորատորիաներ, ինչպես նաև հատուկ զուգարաններ և կենսական այլ տարածքներ դպրոցում: Դպրոցը շարունակաբար վերանայում և բարելավում է ենթակառուցվածքները՝ վերացնելու համար խոչընդոտները, որոնք կարող են խանգարել կարիքավոր սովորողների ֆիզիկական տեղաշարժին:

Համապատասխան օգնություն ցուցաբերելու համար դպրոցը համագործակցում է ներառական խնդիրներով սովորողների հետ աշխատելու փորձ ունեցող մասնագետների հետ:

Կայուն զարգացման և ներառական կրթության հավատամքին համահունչ՝ ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը ձգտում է ստեղծել անվտանգ, մատչելի և գրավիչ ուսումնական միջավայր բոլոր, այդ թվում՝ տեսողության և լսողության խնդիրներ ունեցող սովորողների համար: Մոտ ապագայում նախատեսվում է կատարել ներդրումներ և օգտագործել օժանդակ տեխնոլոգիաների ու ռեսուրսների մի ամբողջ շարք՝ կարիքավոր սովորողների ուսման կարիքներին արդյունավետորեն աջակցելու համար:

Տեսողական խնդիրներ ունեցող սովորողների կարիքներին աջակցելու համար դրանք կարող են ներառել, բայց չսահմանափակվել այնպիսի գործիքներով, ինչպիսիք են Էկրանին զետեղված նյութերի ընթացումը, բրայլյան համակարգը, տեքստ-խոսք ծրագրակազմը (Turnitin) և մեծադիր տպագրված դասագրքերը: Լսողության խնդիրներ ունեցող սովորողների համար նախատեսվում է, անհրաժեշտության դեպքում, օգտագործել այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են լսողական սարքերը, լսողական օժանդակ սարքերը, վերնագրերի փակ համակարգերը և սուրդոթարգմանիչները:

Դպրոցը, ՄԲ-ի պահանջներին համապատասխան, պարտավորվում է ապահովել, որ գնահատման գործընթացները լինեն արդար, նաև՝ հասկանալի բոլոր ուսանողներին: Սա պարտավորեցնում է հետագայում անդրադառնալ այնպիսի անհրաժեշտ միջոցների ձեռքբերմանը, ինչպիսիք են ընթերցանության սարքերը, նոթատետրերը, գնահատման ընթացքում լրացուցիչ ժամանակ տրամադրելը այն սովորողներին, ովքեր նման աջակցության կարիք ունեն:

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցի հոգեբանական ծառայությունը ստեղծվել է՝ հաշվի առնելով ժամանակակից գիտական և սոցիալական մարտահրավերները: Հոգեբանական մշակույթի ներդրումը կրթական գործընթացում պարտադիր գործոն է կրթության որակի փոփոխության համար: Հոգեբանական ծառայությունը յուրաքանչյուր սովորողի համար ապահովում է լիարժեք մտավոր և անձնային զարգացման, աճի և սոցիալական հարմարավետության պայմաններ: Այն օգնում է սովորողների տարիքային և անձնային որակների և հնարավորությունների իրացման գործընթացին, իրականացնում է մասնագիտական խորհրդատվություն և անհրաժեշտ միջամտություններ:



Հոգեբանական ծառայության լիարժեք աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններն են՝ հոգեբանական աշխատանքի իրավական դաշտի ապահովումը, գաղտնիության պահպանումը, ծնողների և դպրոցական այլ մասնագետների համագործակցության և ներգրավման առկայությունը գործընթացներում:

Հոգեբանական ծառայությունն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- Մասնագիտական, էթիկական և իրավական իրավասություն.
- Պատասխանատվություն.
- Գաղտնիություն.
- Շահառուի բարեկեցության ապահովում.
- Մասնագիտական համագործակցություն.
- ✓ *Թափանցիկություն.* ներառում է տեղեկատվության տրամադրում հետազոտության նպատակների և արդյունքների մասին.
- ✓ *Մատչելիություն.* աջակցվող ծառայությունը հասանելի է յուրաքանչյուրին, ով դրա կարիքն ունի.
- ✓ *Գործել ժամանակին.* ի սկզբանե մասնակցություն հոգեբանական ստորաբաժանման աշխատանքներին՝ լուծելով և արագ արձագանքելով սովորողների, Դպրոցի անձնակազմի կամ որևէ անձի առջև ծառայած խնդիրներին և դժվարություններին.
- ✓ *Անհատական մոտեցում.* ուշադրություն է դարձվում սովորողների մտավոր և կրթական մակարդակին, ֆիզիկական առողջության ցուցանիշներին, անձնական բնութագրերին և սոցիալական կարգավիճակին.
- ✓ *Համակարգված, խիստ, ամբողջական մոտեցում.* հոգեվերլուծություն և անձի զարգացում, կրթական մակարդակի բարձրացում, սոցիալական կարգավիճակի վերականգնում.
- ✓ *Բարելավման գործընթացներ.* ամբողջական, փուլային, պատասխանատու գործունեություն.
- ✓ *Արդյունավետության ապահովում.* միջոցների համապատասխան ընտրություն և իրականացում, որոնք արդյունավետ կլինեն անհրաժեշտ հանգամանքներում.
- ✓ *Ներառում և մասնակցություն.* սովորողների սոցիալական բոլոր խմբերին հասնելիության ռազմավարություն.
- ✓ *Հարմարվողականության հայեցակարգ.* շարժունություն, արտաքին կենսապայմանների փոփոխություններին հարմարվելու ունակություն:

Հոգեբանական աշխատանքը ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները.

1. *Հոգեբանական կրթություն:* Սովորողներին, ուսուցիչներին և ծնողներին ծանոթացնել հոգեբանական գիտելիքներին:
2. *Հոգեբանական կանխարգելում:* Մշտական աշխատանքի կատարում՝ սովորողների մտավոր և անձնական զարգացման հնարավոր խնդիրները կանխելու ուղղությամբ:
3. *Հոգեբանական միջամտություն:* Աջակցություն ուսուցիչների, սովորողների և ծնողների առջև ծառայած խնդիրների լուծմանը:



4. *Հոգեախտորոշում:* Ներթափանցում սովորողի ներաշխարհ: Ուսումնասիրության արդյունքները տեղեկություն են տալիս սովորողի գործընթացների ուղղման կամ զարգացման, կանխարգելիչ կամ խորհրդատվական աշխատանքի անհրաժեշտության և արդյունավետության մասին:

5. *Այլ մասնագետների հետ համագործակցություն:* Բխում է սովորողի շահերից: Հոգեբանական ծառայության առաքելությունը և գործառնությանին հնարավորությունները:

1. Վերլուծել սոցիալ-հոգեբանական կրթության իրավիճակը սոցիալական տարբեր ոլորտներում, որոնք սովորողի միջավայրն են և ազդում են նրա վրա:

2. Ուղղորդել սովորողին դեպի ինքնակրթություն և օգնել ձևավորելու սեփական կյանքն ու գործողություններն ինքնուրույն կազմակերպելու ունակություն:

3. Համակարգել և միավորել տարբեր մասնագետների և կազմակերպությունների գործողությունները: Սրանք լուծում են երեխայի ճգնաժամային վիճակների և ինքնապաշտպանության իրավունքի հետ կապված խնդիրները:

4. Պահպանել և պաշտպանել անձի իրավունքները, շահերը: Կանխել այնպիսի խախտումները, ինչպիսիք են խմբային և անհատական ճնշումները և այլն:

5. Աջակցել սովորողների լարվածության (սթրեսի) նկատմամբ դիմակայության բարձրացմանը:

6. Նպաստել աշխատակազմի և նրա անդամների առողջ ապրելակերպի պահպանմանը:

Մշակութային, սոցիալ-տնտեսական և լեզվական բազմազանությանն առնչվող խնդիրները հաղթահարելու համար դպրոցը կիրառում է հետևյալ ռազմավարությունները:

\* Ուսումնական պլան, որը հաշվի է առնում մշակութային առանձնահատկությունները: Դպրոցի ուսումնական պլանում նկատի է առնվել սովորողների մշակութային բազմազանությունը՝ միավորելով տարբեր մշակույթներին առնչվող ուսումնական նյութերը և նշելով մշակութային միջոցառումներն և տոները:

\* Բազմալեզու անձնակազմ և ծառայություններ: Ապահովում է լեզվական ինտեգրում՝ ընդգրկելով բազմալեզվակիր անձնակազմ և ներդնելով լեզվի շարունակական ուսուցման ծրագիր:

\* Կրթաթոշակային ծրագրեր: Նախատեսվում է հիմնել կրթաթոշակային ծրագրեր սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար՝ ապահովելով կրթության հավասար հնարավորություններ՝ անկախ սոցիալ-տնտեսական կարգավիճակից:

\* Համայնքային ներգրավվածություն և միջմշակութային հաղորդակցություն: Դպրոցն ակտիվորեն համագործակցում է տեղական համայնքի հետ, ներառյալ համայնքի մասնակցությունը դպրոցական միջոցառումներին՝ դրանով իսկ նպաստելով մշակութային իրողությունների ներառմանը:

\* Անձնակազմի բազմալեզու ուսուցում: Դպրոցի անձնակազմը պարբերաբար վերապատրաստվում է մշակութային յուրահատկությունների և խոցելիության վերաբերյալ



մանկավարժահոգեբանական դասընթացների գծով, որոնք նպաստում են դպրոցում համապատասխան միջավայրի ստեղծմանը, որտեղ հարգվում և հաստատվում են բոլոր սովորողների մշակութային փորձն ու կենսակերպը:

\* Աջակցություն անգլերեն լեզուն սովորողներին: Դպրոցը լրացուցիչ լեզվական աջակցություն է տրամադրում անգլերեն սովորողներին: Սա ներառում է անգլերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի (ESL) դասընթացների և լրացուցիչ կրկնուսուցման ծառայությունների մատուցում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (SEN) սովորողների ծնողները կամ օրինական ներկայացուցիչները կարևոր գործընկերներ են Դպրոցի ներառական կրթության ռազմավարության իրականացման գործում: Աշխատելով Դպրոցի թիմի հետ՝ նրանք ակտիվորեն օգնում են մշակելու և իրականացնելու իրենց երեխաներին հարմարեցված ուսումնական պլաններ: Ծնողները ներգրավվում են դպրոցական քննարկումներում՝ որոշելու իրենց երեխաներին առավել համապատասխան կրթական ծանրաբեռնվածությունը: Նման համատեղ աշխատանքի շնորհիվ իրագործվում է Դպրոցի գլխավոր նպատակներից մեկը՝ յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործընթացը հարմարեցնել իր յուրահատուկ կարիքներին և կարողություններին:

#### 4. Գործընկերություն և համայնքային ներգրավվածություն

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցն կարևորում է համայնքի հետ գործընկերությունը և մասնակցությունը ուսուցման մատչելիության ապահովման և ներառականության խթանման գործընթացում: Դպրոցի նպատակն է ստեղծել բարենպաստ և ներառական կրթական մթնոլորտ՝ արտաքին շահագրգիռ կողմերի հետ համագործակցության և ավելի լայն համայնքի կյանքում ակտիվ ինտեգրման միջոցով:

Դպրոցի՝ գործընկերության նկատմամբ տրամադրվածությանը և համայնքի հետ աշխատանքին նպաստող նախաձեռնություններն ու պարտականություններն են.

- Համայնքի ներգրավում. համագործակցային գործընկերություններ: Դպրոցն ակտիվորեն որոնում է գործընկերներ տեղական կազմակերպությունների, ձեռնարկությունների, համալսարանների և համայնքային խմբերի շրջանում, որոնք կիսում են մատչելիության և ներառականության մոտեցումները: Կոնկրետ գործընկերային հարաբերությունները ներառում են համագործակցություն Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և կապերը մասնագիտացված աջակցության կենտրոնների հետ, ինչպիսիք են Երևանի թիվ 1, 2, 3 և 4 տարածաշրջանային մանկավարժական և հոգեբանական աջակցության կենտրոնները: Այս գործընկերությունները թույլ են տալիս դպրոցին օգտագործել արտաքին փորձառություններ, ռեսուրսներ և հնարավորություններ, որոնք բարելավում են սովորողների կրթական փորձը: Դպրոցը խրախուսում է



ծնողներին, խնամակալներին և համայնքի անդամներին՝ ակտիվորեն մասնակցելու դպրոցական միջոցառումներին, ծնող-ուսուցիչ ասոցիացիաներին և կամրնտրական ծրագրերին:

- Տեղեկատվական-բացատրական աշխատանք: Դպրոցը կազմակերպում է սեմինարներ՝ ծնողների, մանկավարժների և համայնքի անդամների համար՝ մատչելիության և ներառականության վերաբերյալ իրազեկությունը բարձրացնելու համար:
- Համագործակցություն տեղական հաստատությունների հետ: Դպրոցը համագործակցում է տեղական հաստատությունների հետ, ինչպիսիք են՝ հաշմանդամների աջակցության կազմակերպությունները, մշակութային կենտրոնները և ՀԿ-երը: Այս համագործակցությունը նպատակ ունի խթանելու ներառականությունը և տրամադրելու լրացուցիչ ռեսուրսներ ու ծառայություններ Դպրոցի սովորողներին:
- Ծառայություն-ուսուցում և սոցիալական նախաձեռնություններ: Սովորողները մասնակցում են ծառայությունների ուսուցման նախագծերին, որոնք նպաստում են կարեկցանքի, սոցիալական պատասխանատվության և ներառականության զարգացմանը:
- Ներառման արշավներ: Դպրոցը նախաձեռնում և մասնակցում է արշավների և այլ միջոցառումների, որոնք նպաստում են փոխադարձ հարգանքի և բազմազանության ըմբռնմանը, ներառականության մասին իրազեկության բարձրացմանը և հավասար հնարավորությունների պաշտպանմանը:
- Համատեղ որոշումների կայացում. շահագրգիռ կողմերի ներգրավում: Տարբեր շահագրգիռ կողմեր, ներառյալ սովորողները, ծնողները, ուսուցիչները և համայնքի ներկայացուցիչները, մասնակցում են մատչելիությանը և ներառականությանն առնչվող որոշումների կայացման գործընթացներին:

### 5. Մասնագիտական զարգացում

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցում, հասանելիության և ներառման քաղաքականության հաջող իրականացման նպատակով, իրականացվում են մասնագիտական զարգացման հետևյալ նախաձեռնությունները.

1. Ներառական ուսուցման ռազմավարություններ.

\* Մեմինարներ և վերապատրաստումներ: Ուսուցիչների համար իրականացվում են սեմինարներ և դասընթացներ՝ ներառական ուսուցման ռազմավարության կառուցումը հաստատող հիմնադրույթների ներգրավմամբ: Այս սեմինարների արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է հետադարձ կապի հարցումների և դասավարման պրակտիկայի դիտարկման միջոցով:



\* Գործընկերների դիտարկումներ և համագործակցային անդրադարձումներ: Դյուրացվում է փոխադարձ դասալսումների և դրանց համատեղ քննարկումների անցկացման պրակտիկան՝ թույլ տալով ուսուցիչներին՝ դիտարկելու, հետադարձ կապի ապահովմամբ սովորելու միմյանց ներառական գործելակերպից ու փորձից:

2. Հասկանալ ուսուցման բազմաբնույթ կարիքները:

\* Հրավիրված բանախոսներ և փորձագետներ: Հրավիրվում են հատուկ կրթության, ներառական պրակտիկայի և մշակութային իրազեկման ոլորտի բանախոսներ և փորձագետներ՝ հաղորդելու համար իրենց փորձն ու գաղափարները ուսուցիչներին: Այս գործընթացի արդյունավետությունը բնութագրվում է հետագա քննարկումների և գնահատումների միջոցով՝ ինչպես է յուրացրած փորձը կիրառվում դասավարման պրակտիկայում:

\* Առցանց դասընթացներ և ռեսուրսներ: Առաջարկվում է մուտք գործել առցանց դասընթացներ, վեբինարներ և այլ ռեսուրսներ, որոնք ուղղված են անգլերեն սովորողների, հաշմանդամություն ունեցողների, տարբեր մշակութակիրների բացառիկությունը հասկանալուն և հարգելուն: Իրականացվում է այդ ռեսուրսների օգտագործման և արդյունավետության մոնիտորինգ՝ դրանց արժեքը և կիրառելիությունը գնահատելու համար, անձնակազմի հետ հետադարձ կապի ապահովման ճանապարհով:

3. Մշակութային առանձնահատկությունները հաշվի առնող պրակտիկա:

\* Միջմշակութային հաղորդակցություն: Ուսուցումն ուղղվում է հաղորդակցման արդյունավետ ռազմավարությունների, ակտիվ ունկնդրման և տարբեր մշակութակիր սովորողների միջև հարգալից երկխոսության զարգացմանը: Այս հմտությունների կանոնավոր գնահատումը կատարվում է դասարանում դիտարկումների և քննարկումների ընթացքում:

4. Շարունակական աջակցություն և իմաստավորում: Դաստիարակություն և վարժանք: Փորձառու ուսուցիչները կամ խորհրդատու-մարզիչները հրահանգում և աջակցում են մանկավարժներին ներառական պրակտիկայի իրականացման գործում: Պարբերական հանդիպումները թույլ են տալիս ծանոթանալ խորհրդատուների գործելակերպին, փոխանակել կարծիքներ և կատարել առաջարկություններ: Այդ հանդիպումները ծառայում են որպես հարթակ ուսուցիչների համար՝ գնահատելու իրենց առաջընթացը և քննարկելու իրենց առջև ծառայած մարտահրավերները:

## 6. Տեղեկատու գրականություն

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166>

<https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu>

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=94%20683>

<https://hmk.am/yerevani4-tmak-hy/>



“Programme standards and practices”, IBO, 2022.

“Access and inclusion policy”, IBO, 2022